

# ՀԱՅԱՍՏԱՆ

**Պարենային անվտանգության  
վերաբերյալ ընդունվող  
որոշումների բարելավման  
ուղղված տեղեկատվական  
համակարգերի /ԵՀ/ՊԳԿ ծրագիր՝  
Եվրոպական հարևանության  
ֆազանականության  
երջանակներում /2010-2012թթ./**

**Ծրագիրը** գործում է Հայաստանում, Ադերբեջանում,  
Վրաստանում և Մոլդովայում: Ծրագրի երեք տարվա  
բյուջեն կազմում է երեք միլիոն եվրո: Եվրոպական  
հանձնաժողովը /ԵՀ/ ֆինանսավորում է ծրագիրը, իսկ  
Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և  
գյուղատնտեսության կազմակերպությունը /ՊԳԿ/  
իրականացնում է այն:

**Ծրագիրը**՝ ԵՀ պարենային անվտանգության թեմատիկ  
ծրագրի՝ մաս է կազմում, որն ուղղված է առավել  
աղքատ և խոցելի խմբերի պարենային անվտանգության  
բարելավմանը:

**Ծրագրի** նպատակն է բարձրացնել պարենային  
անվտանգության մակարդակը՝ մեծացնելով  
պարենային անվտանգությանը վերաբերող  
տվյալներ հավաքելու, ամփոփելու և տարածելու  
հարցում պետական կառույցների  
հնարավորությունները, ինչպես նաև մշակել  
պատշաճ և հավաստի տվյալների վրա հիմնված  
ֆազանականություն և ծրագրեր:

## Մեր ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ

**Մանե Թափալցյան՝ Հայաստանում ծրագրի համակարգող**  
Էլ. փոստ՝ [Mane.Tapaltsyan@fao.org](mailto:Mane.Tapaltsyan@fao.org)  
Հեռախոս՝ (+ 374) 10 542503  
Երևան, Հայաստան

**Ֆրանսուազ Տրին՝ ծրագրի ղեկավար**  
Էլ. փոստ՝ [TrineFrancoise.Trine@fao.org](mailto:TrineFrancoise.Trine@fao.org)  
հեռախոս՝ (+39) 06 57054239 Միավորված ազգերի  
Կազմակերպության Պարենի և Գյուղատնտեսության  
Կազմակերպություն  
Մշակումն ու դիզայնը՝ Նորա Ֆրատինի



©FAO/Ion Spauli



©FAO/Ion Spauli



Հայաստանում ծրագիրը համագործակցում է կառավարության հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել պարենային անվտանգության մակարդակը, նվազեցնել աղքատությունը՝ կատարելագործելով պետական հաստատությունների միջև փոխանակվող տեղեկատվության որակն ու տարածումը: Բացի այդ, ծրագիրը նպաստում է հավաստի տվյալների վրա հիմնված վերլուծություններին ու գնահատումներին:

**Աղքատությունը պարենային անապահովության հիմնական պատճառն է:** Չնայած վերջին տասնամյակում արձանագրված զգալի առաջընթացին՝ 2008թ. ՀՀ բնակչության 24 %-ը շարունակում էր ապրել աղքատության մեջ: Բացի այդ, գլոբալ տնտեսական հզուժամը կասեցրել է դրական միտումները:

**Ծրագիրն** իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Հայպետհիդրոմետ ծառայության հետ համատեղ՝ գործընկերների ներկայացրած առաջարկությունների հիման վրա:



©Anton van Engelen

## ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պարենային անվտանգության ցուցանիշների բարելավում**  
ՊԳԿ-ն փորձագիտական աջակցություն է ցուցաբերում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մշակած ցուցանիշների որակի և կիրառման բարելավմանը:

**Ազրո-օդերևութաբանական կանխատեսումների բարելավում**

Հայպետհիդրոմետին ՊԳԿ-ն աջակցում է կանխատեսումների մեթոդաբանության կատարելագործման հարցում, ինչպես նաև նպաստում է , որ այդ կանխատեսումները ժամանակին հասու դառնան Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին:

**Պարենային անվտանգության տեղեկատվական կառավարման համակարգի ներդրում**

Համակարգը կհետագանի պարենային անվտանգությանը վերաբերող տեղեկատվության կառավարումը, ինչպես նաև փոխանակումը պետական հաստատությունների, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և Հայպետհիդրոմետ ծառայության միջև:

**Աջակցություն հավաստի տվյալների վրա հիմնված վերլուծությունների կատարմանը**

ՊԳԿ-ն հնարավորություն է ընձեռում առավել մասնագիտորեն մշակել այն վերլուծությունները և գնահատումները, որոնք վիճակային նշանակություն ունեն հավաստի տվյալների վրա հիմնված ֆաղափականության և ծրագրերի պլանավորման համար:



©FAO/Johan Spanner



©Hambardzum Hovhannisyane